ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ.

Եթե ինչ-որ մեկը ուղղակիորեն (որպես տուժող) կամ անուղղակիորեն կապված է եղել կատարված հանցագործության հետ (օրինակ՝ որպես վկա կամ մասնակից է դարձել ընտանիքի անդամի միջոցով), նա պետք է կարողանա հասկանալ ու գնահատել դրա հետևանքները: Դա առաջին հերթին նաև մարդու բնական ռեակցիան պետք է լինի, մանավանդ որ այդ պահին առաջանում են ֆիզիկական կամ հոգեբանական և ֆինանսական խնդիրներ: Տուժածների աջակցության ծառայությունը այդ մարդկանց առաջարկում է իր օգնությունը՝ նման իրավիճակներից դուրս գալու համար:

Ո՞ւմ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՆԵԼ:

- հիմնականում այն անձանց , ովքեր Հունգարիայում դարձել են հանցագործության կամ սեփականության իրավունքի խախտման զոհ :

- ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՆԵԼ:
- Տուժածների աջակցության ծառայությունը և տուժածների աջակցության սուբսիդիաների համակարգը հասանելի են բոլոր տուժածներին և անվճար են՝ անկախ առաջացած խնդիրներից:
- Աջակցության ձևը որոշվում է՝ ելնելով կատարված հանցագործության բնույթից, տուժողի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակից և առաջացած անձնական խնդիրներից:

ԻՆՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼ:

- Տեղեկատվություն:
- Հոգեկան աջակցություն, հոգեբանական օգնություն:
- Իրավաբանական խորհրդատվություն՝ ստացած վնասների հետ կապված.
- Գործնական կամ անհրաժեշտության դեպքում առաջացած այլ կարգի օգնություն:
- Գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցելով՝ տուժածի տարհանում դեպի ապահով վայր:
- Տուժողի կարգավիճակի ապացույց.
- Անհրաժեշտության դեպքերում տուժածին անհապաղ ֆինանսական օգնության կամ պետական փոխհատուցման տրամադրում:

- ԻՆՉՈ՞Վ ԿԱՐՈՂ Է ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ:

- <u>Տուժածների աջակցության կենտրոն</u>

- Տուժածների աջակցության կենտրոնները տուժածներին հիմնականում տրամադրում են էմոցիոնալ հոգեբանական օգնություն, ինչպես նաև պաշտպանում են տուժածների շահերը, նույնիսկ տրամադրում իրավաբանական խորհրդատվություն: Կենտրոնների աշխատակիցները հնարավորինս սեղմ ժամկետներում տուժողին տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն:
- Հոգեբանների կողմից տրամադրվող հոգեբանական ծառայությունները հասանելի են տուժածների աջակցության բոլոր կենտրոններում:
- Տուժածների աջակցության կենտրոնները գրասենյակային մթնոլորտ չունեն, ուստի տուժածները իրենց կարող են զգալ ավելի հանգիստ՝ վստահ լինելով իրենց ունեցած տեղեկությունների հաղորդման ժամանակ :
- Տուժածների աջակցության կենտրոններ կարող են այցելել ոչ միայն հանցագործությունից տուժածները, այլ նաև այն անձինք, ովքեր ցանկանում են տեղեկատվություն ստանալ տուժածների մասին:

Անձամբ հետաքրքրվողները կարող են բանավոր տեղեկատվություն ստանալ հաճախորդի տարածքում գտնվող տեղեկատվական գրասենյակի ընդունարանում, ինչպես նաև հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:

Տուժածների տարածքային ծառայություններ

Մայրաքաղաքի և մարզային գրասենյակները՝ որպես պետական կառույցներ, իրավասու են իրականացնելու բոլոր պաշտոնական ծառայությունները՝ կապված տուժողների օգնության հետ:

Աջակցության ինչ ձևեր կան պետական մարմիններում գործող տուժածների աջակցության ծառայություններում:

Իշխանությունների կողմից որոշում պահանջող
աջակցության ձևերը.

- պետական փոխհատուցում
- անհապաղ ֆինանսական օգնություն
- տուժողի կարգավիճակի ապացույց

Պաշտոնական որոշում չպահանջող աջակցության ձևերը.

- շահերի պաշտպանության աջակցում.

Տուժողների օգնության ընթացակարգերը անվճար են, նույնիսկ պաշտոնական որոշման դեմ հարուցված վարչական հայցն է անվճար :

Տուժողների օգնության ծառայությունների հեռախոսահամարն է՝ (06 80 225 225)

Տուժողների օգնության կենտրոնի աշխատակիցները տուժողին տեղեկատվություն են տրամադրում նրա իրավունքների և այն ծառայությունների մասին, որոնք կարող են մատուցվել նրան: Ծառայության աշխատակիցներն օգնում են տուժածին կապ հաստատել մոտակա Տուժողների աջակցության կենտրոնի հետ: Հեռախոսահամարին շուրջօրյա կարելի է անվճար զանգահարել:

ՈՐՏԵՂ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

1. Ձեզ ամենամոտ գտնվող տուժածների աջակցության կենտրոնին: Նրանց կոնտակտային տվյալները կարող եք գտնել հետևյալ կայքում՝ https://vansegitsep.im.pov.hu/elerhetosepek/
2. Զանգահարեք 24/7 տուժածների օգնության հեռախոսահամարին (06 80 225 225)

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք https://vansegitseg.im.eov.hu/ կայք, մոտակա տուժածների օգնության կենտրոն կամ զանգահարեք տուժածների օգնության հեռախոսահամարին:

Փոստային հասցե՝ H-1357 Budapest, Pf. 2. Հեռ.՝ (+36 1) 795 8452 Էլ.